

ԺԴ. տարի / Թիւ 1856
Գ ի ն ը ` 2 €
14^e année / N° 1856
Prix unitaire : 2 €

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆՈՐ ԵՐԿԲԵԻԵՌ ԱՇԽԱՐՀԻ ՁԵՒԱԴՈՐՈՒՄ

Մինչ Արցախի շրջափակումը իր 100-րդ օրը բոլորեց, հակառակ միջազգային հասարակության համատարած դատապարտումին, Ազերիները անվրդով ու վճռակամ կը շարունակեն իրենց ապօրինի արարքը, որուն հետ լուելեայն համակարծիք ըլլալ կը թուին ռուսական եւ արեւմտեան հակադիր ճակատները: Այսպէսով, Արցախի հակամարտութիւնը կը մնայ անել դրութեան մէջ, զորս՝ Արեւմուտք-Ռուսաստան միջազգային առճակատումին: Կարելի է ընդգծել Հայաստանի Արտաքին գործոց նախարարին վերջերս ըրած յայտարարութիւնը, ուր ան միջազգային հասարակութեան ուշադրութեան կը յանձնէր, թէ 2020 Նոյեմբեր 9-ի զինադադարի ետակողմ յայտարարութեան չէ մնացած կէտ մը, որ Ազերպայճան երկու տարիէ ի վեր խախտած չըլլայ: Սակայն հակառակ ասոր, թէ՛ ԵՄ-ը, թէ՛ ԱՄՆ-ն յստակօրէն յայտարարեցին, որ Ազերպայճանի դէմ ո՛չ մէկ պատիժ կիրարկելու նպատակ ունին: Վերջակէտ:

Տնտեսական պատիժներու առընթեր Արեւմուտքը դիմեց նաեւ Պատժական միջազգային ատեան, որ Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութինը կալանաւորելու հրահանգ արձակեց: Որքան որ շատերու համար միջազգային արդարադատութեան կարելոր որոշում թուի այս վճիռը, նոյնքան ալ ուրիշներու համար Արեւմուտքի՝ «երկու չափ-երկու կշիռ»-ի յստակ արտայայտութիւնն է: Իսկ Պատժական միջազգային ատեանը ե՞րբ պիտի կայացնէ ԱՄՆ-ու նախագահ Ժորժ Պուշը, Միացեալ թագաւորութեան վարչապետ Թոնի Պլէրը կալանաւորելու որոշում, Իրաքը անդրեւնուն համար: Նոյնպէս՝ Սուրիան քաջայողներուն դէմ: Դեռ չիսօսինք մարդկային իրաւանց եւ ժողովուրդներու դէմ Ալիէի եւ Էրտողանի գործած ոճիրներուն մասին:

Արեւմուտք-Ռուսաստան հակամարտութիւնը նոր աշխարհակարգ մը ձեւաւորելու վրայ է, ուր Չինաստանը պիտի խաղայ առանցքային դերակատարութիւն մը: Չինաստանի նախագահ Ցի Չինփինկի Ռուսաստան այցելութիւնը եւ երկու երկիրներու միջեւ ռազմավարական դաշինքի ստորագրումը ասոր բացայայտ դրսեւորումն է: Յստակ է որ Ռուսաստանի դէմ Արեւմուտքի սահմանափակ պատիժները սպասուած արդիւնքը չտուին: Երոպական շուկայի փոխարէն Ռուսաստան իր ուժանիւթի վաճառքը շեղեց դէպի Չինաստան, Հնդկաստան, որոնք օգտուեցան միջազգային շուկայէն անելի

նպաստաւոր գիւնդով ուժանիւթ ձեռք բերելու առիթէն: Նոյնպէս, Ռուսաստան Չինաստանէն եւ այլ երրորդ երկիրներէ, - ի միջի այլոց Թուրքիայէն եւ Հայաստանէն, - ստացաւ արգելքի ենթակայ արեւմտեան ապրանքներու կարելոր մէկ մասը: Անշուշտ, Երոպական Միութեան երեսփոխաններու ուշադրութենէն չվրիպեցաւ այն կեղծատր երեւոյթը, որ ԵՄ ռուսական կազ կը գնէր Ազերպայճանի միջոցով, Ուրսուլա Վոն տեր Լեյէնի Պաքոյի մէջ Ալիէի հետ կնքած պայմանագրով:

Չինաստան միջազգային յարաբերութիւններու մէջ եւս նոր հաշտարարի դերակատարութիւն ստանձնած է: Ցի Չինփինկի շնորհիւ Փեքինի մէջ Իրանի եւ Սաուտական Արաբիոյ միջեւ հաշտութիւն գոյացաւ: Երեւոյթ մը, որ իր դրական հետեւանքները պիտի ունենայ Եմէնի, Սուրիոյ եւ այլ արաբական երկիրներու մէջ տեղի ունեցող հակամարտութիւնները խաղաղեցնելու դիտանկիւնէն: Նոյնպէս, Ցի Չինփինկի Մոսկուա այցելութեան առթիւ պիտի քննարկուէր ռուս-ուքրահնական խաղաղութեան չինական ծրագիրը:

ԱՄՆ-ու կողմէ Թայվանի պաշտպանութիւնը եւ Չինական ծովուն մէջ գերակայութեան մրցակցութիւնը նպաստաւոր ազդակներ են Ռուսաստան-Չինաստան արագ մերձեցման, որ կրնայ նաեւ Ուքրահնական պատերազմին մէջ Ռուսաստանի ապահովել անսպասելի առաւելութիւն մը: Վերջերս, Արեւմտեան երկիրները կ'ահագանգէին իրենց սպառազինութեան պաշարներու անկումին մասին: Եթէ չինական հաշտութեան առաջարկը մերժուի եւ Չինաստան գորավիզ կանգնի Ռուսաստանին ընդդէմ Արեւմուտքի, պատերազմի դաշտին վրայ բնականաբար այդ պիտի ունենայ իր ազդեցութիւնը, ինչպէս Իրանի անօդաչու սարքերը Ռուսաստանին ապահովեցին կարգ մը առաւելութիւններ: Այսպէսով, Ռուսաստան-Ուքրահնական պատերազմը Արեւմուտք-Չինաստան բախումի վերածուելու ընթացքի մէջ է: Եւ Ռուսաստան-Ուքրահնական հակամարտութեան սրացման մէջ Արեւմուտքի պատասխանատուութիւնը մեծ է, յատկապէս ՕԹԱՆ-ի դէպի արեւելեան Երոպա տարածուելու մարմաշին պատճառով, որ Ռուսաստանի մէջ սովեական շրջանի կիրքերու եւ վախերու զարթոնումին պատճառ դարձաւ: Չինաստան եւս այդ ընդլայնումը իր անվտանգութեան սպառնալիք համարեց:

Ժ.2. ■

ԱՐՅԱԽ, ՄԱՐՏ 21՝ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ 100-ՐԴ ՕՐ

ԱՐՅԱԽԻ ՇՈՇ ԳԻԻՂ, ՄԱՆԿԱՀԱՍԱԿ ԵՐԱԽԱՆԵՐՈՒ ՄԱՅՐԸ՝ ԸՆԴԴԵՄ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ



Դիանա Գաբրիէլեան Արցախի Ասկերանի շրջանի Շոշ գիւղը կը բնակի: Երեք մանկահասակ երախայ ունի: Շրջափակման պատճառով շարք մը խնդիրներու դէմ-յանդիման կը գտնուի: Գիւղին մէջ ելեկտրականութեան խզումի պատճառով ջուրը սակաւ է: Եթեմանեայ տղան հիւանդ է. ո՛չ կրնայ երեւան տանիլ՝ բժիշկի, ո՛չ ալ Ստեփանակերտի հիւանդանոցը՝ քննութիւններ անցընելու, քանի որ վառելանիւթի մատակարարման խափանումներու պատճառով երթեկէի խնդիրներ յառաջացած են...: ■

ՇՐՋԱՓԱԿՄԱՆ 100-ՐԴ ՕՐԸ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԷՋ ՀՅՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՑՈՅՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԵՆ

Արցախը 100 օր է, որ շրջափակման մէջ է: Ազերպայճան արդէն 100 օր է, որ չի կրնար հասնիլ իր դաւադիր նպատակներուն՝ հալածաբար Արցախն ու գրաւել զայն: 2020-ի դաժան պատերազմէն յետոյ թէեւ վիրաւոր, սակայն Արցախի սիրտը կը բաբախի, իսկ այդ կը նշանակէ, որ Արցախցին կը պայքարի:



Մտնողի, դեղորայքի, վառելիքի, ելեկտրականութեան ու կազի բացակայութեան պայմաններու տակ կ'ապրի Արցախցին: Երեք պատերազմի բովով անցած, բազմաթիւ զրկանքներ ու դաժանութիւններ տեսած Արցախցի կամքը անկոտորում է: Արցախցին հաւատարիմ է իր ընտրած պայքարի ուղիին:

ՊԱՔՈՒԻ ԿՈՉԸ ԵՐԵՒԱՆԻՆ. «ՊԷՏՔ ԶԷ ԶԱՐԱՇԱՀԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԻՆ ԵՄ-Ի ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ»

Ազերպայճանի Արտաքին գործոց նախարարությունը կոչ քրած է Հայաստանի իշխանություններուն՝ «կացութիւնը սրելու նպատակով պէտք չէ չարաշահել Եւրոպական Միութեան (ԵՄ) դիտորդական առաքելութեան ներկայութիւնը»:

«Հայկական կողմը պէտք է վերջ տայ իր տարածքին ԵՄ քաղաքացիական առաքելութեան Գերակայութեան չարաշահումին, որու նպատակը տարածաշրջանի կացութեան սրումն ու սեփական ռազմական գրգռութիւնները կոծկելն է», – նշուած է Ազերպայճանի դիւանագիտական գերատեսչութեան կողմէ հրապարակուած յայտարարութեան մէջ:

«Ազերպայճանի կողմէ տարածաշրջանի խաղաղութեան հաստատման ուղղուած ջանքերուն դէմ գործադրուող բոլոր գրգռութիւններու պատասխանատուութիւնը կը կրէ Հայաստանի ռազմաքաղաքական ղեկավարութիւնը: ԵՄ-ի առաքելութեան Գերակայութիւնը Հայաստանի տարածքին պէտք չէ Երեւանի՝ իր իսկ ստանձնած պարտաւորութիւնները կատարելէ հրաժարելուն պատճառ դառնայ», – ընդգծուած է յայտարարութեան մէջ: ■

ԱՐՑԱԽԻ ՀԱՅՅԵՐՈՒՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԻՒՆ ԽՈՍՏԱՅՈՂ ԱԼԻԵԻ ԽԱՄԱՃԻԿԸ ԿԸ ՍՊԱՌՆԱՅ ՀԱՅՅԵՐՈՒ ԱՐԻՒՆԸ ԽՄԵԼ

Ի հեճուկս Ազերպայճանի նախագահ Իլհամ Ալիեւի յայտարարութիւններուն, թէ Ազերպայճան պատրաստ է իր օրէնքներու շրջանակներու մէջ ապահովել Արցախի հայութեան անվտանգութիւնն ու իրաւունքները՝ Բերձորի միջանցքը արդէն 100 օրէ ի վեր փակ պահող այսպէս կոչուած «բնապահ»-ները Հայերը սպանելու բացառապէս սպառնալիքներ կը հնչեցնեն:



Ընկերային ցանցերու վրայ սփռուած է տեսանիւթ մը, ուր միջանցքը փակած կեղծ «բնապահ»-ներէն մէկը բացառապէս կը սպառնայ սպանել Հայերը: «Մենք շուտով Նովրուզի տօնին աչստեղ Հայ կը մորթենք եւ անոր արիւնը կ'աւելցնենք քեպապի մէջ», – լիր ժպիտով կը յայտարարէ Ազերպայճանցին, զուարճացնելով զինք շրջապատողները:

Սոյն տեսանիւթին անդրադարձած է նաեւ Հայաստանի յատուկ յանձնարարութիւններու ղեկավար Վարդան: «Արիւնարբու վարչակարգի եւ անոր խամաճիկների համար երբեք բաւարար չէ Արցախի 120 հազարանոց բնակչութիւնը սովի մատնելը: Հիմա նրանց կեղծ «բնապահ»-ը սպառնում է ապանել բոլոր Հայերին եւ բառացիօրէն խմել նրանց արիւնը: Մենք իսկապէ՛ս 21-րդ դարում ենք: Ծրջապատում ինչ-որ տեղ կա՞նք քաղաքակիրթ աշխարհ», – «Թուիթըր»-ի իր հաշիվին գրած է ան: ■

Մարտ 21-ին, Ազերպայճանի կողմէ Արցախի շրջափակման ցեղասպանական քաղաքականութեան 100-րդ օրը Արցախի երիտասարդները անգամ մը եւս ցոյց տուած են իրենց հաստատակամութիւնը՝ այս հողին վրայ ապրելու ու արարելու ի հեճուկս համայն աշխարհի լուծութեան եւ բոլոր դժուարութիւններուն: ՀՅԴ Արցախի երիտասարդական միութիւնը Ստեփանակերտի Վերածնունդի հրապարակին վրայ ցոյց կազմակերպած է վերահաստատելու այդ կամքը, Արցախցիի ձայնը լսելի դարձնելու համայն աշխարհին, պայքարի վճռականութիւնը արտայայտելու եւ հայ ժողովուրդի միասնական կամքը ապացուցելու համար: ■

NOR HARATCH
Journal trihebdomadaire en langue arménienne
Journal édité par SARL NorH Publications – 3, rue Charrier, 94000 Créteil
Adresse établissement secondaire : NorH Publications – 83, rue d'Hauteville - 75010 Paris
contact@norharatch.com / abonnement@norharatch.com
Directeur de publication : Aram Kerovpyan
CPPAP : 1125 | 90193 / ISSN : 2105-7672
Imprimé et distribué par Eucles Daily – 24, rue Turgot, 75009 Paris
Prix d'Abonnement annuel (France): 250 € / Prix d'Abonnement annuel (Hors France): 300 €
Pour les virements bancaires :
SOCIÉTÉ GÉNÉRALE – Agence Paris St Vincent de Paul (03320)
IBAN - FR76 3000 3033 2000 0206 9946 930 / BIC - SOGEFRPP

ԱՐՑԱԽԻՆ ԲՈՒՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԱԾ ՀԱՅ ԲՆԱԿԶՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՂՄԵՐԻՆ ՊԱՀԱՆՋԱԾ ԵՆ ԱՊԱՀՈՎԵԼ ԻՐԵՆՑ ԱՆՎՏԱՆԳ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Արցախէն բռնի տեղահանուած հայ բնակչութեան ներկայացուցիչները Մարտ 19-ին բաց նամակ մը հրապարակած են նշելով, որ 2020-ի 44-օրեայ պատերազմին եւ Ազերպայճանի կողմէ իրագործուած բռնի տեղահանութիւններու հետեանքով Արցախի Հագրութի, Շուշի, Ասկերանի, Մարտունիի եւ Մարտակերտի շրջաններու տասնեակհազարաւոր հայ բնակչութիւնը ներկայիս գրկուած է իր հայրենիքին մէջ ապրելու իրաւունքէն:

«Դեռեւս 1990-ական-ներին Ադրբեջանի կողմից բռնի տեղահանուել է նաեւ Ծախումեանի շրջանի, Գետաշէնի եւ-թաշրջանի տասնեակ հազարաւոր հայ բնակչութիւնը:



Մինչդեռ 2020 թուականի Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեան 7-րդ կէտով Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի առաջնորդները պարտաւորուել են ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագոյն յանձնակատարի գրասենեակի վերահսկողութեան ներքոյ ապահովել ներքին տեղահանուած անձանց եւ փախստականների վերադարձը Արցախ եւ յարակից շրջաններ, ինչը մինչեւ օրս տեղի չի ունեցել:

Հաշուի առնելով Արցախից բռնի տեղահանուած բնակչութեան իրաւունքների վերականգնման անհրաժեշտութիւնը, ինչպէս նաեւ 2020 Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեան 7-րդ կէտով Ադրբեջանի ստանձնած պարտաւորութիւնները՝ սոյն նամակով Ադրբեջանի Հանրապետութեան նախագահ Իլհամ Ալիեւի պահանջում ենք ճանաչել հայ փախստականների խախտուած իրաւունքների վերականգնման անցտաճգելի հրամայականը, ապահովել նրանց անվտանգ եւ արժանապատիւ վերադարձը իրենց պատմական հողեր եւ նախկին բնակավայրեր՝ համաձայն ստանձնած պարտաւորութիւնների, մարդու եւ մարդասիրական իրաւունքի:

Կոչ ենք անում Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեանին՝ որպէս 2020 Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեան ստորագրող կողմ, հետեւողական մօտեցում ցուցաբերել միջազգային իրաւական եւ քաղաքական բոլոր գործիքակազմերի գործադրման հարցում, որը ուղղուած կը լինի Ադրբեջանի կողմից ստանձնած միջազգային պարտաւորութիւնների իրականացման ապահովմանը: Միեւնոյն ժամանակ, խնդրում ենք ստեղծել լրացուցիչ գործիքակազմեր փախստականների իրաւունքների եւ շահերի առաւել արդիւնաւէտ պաշտպանութեան, նրանց իրաւական պահանջների արձարծման համար:

Կոչ ենք անում Ռուսաստանի Նախագահ Վլադիմիր Պուտինին՝ միջազգային իրաւունքով սահմանուած կառուցակարգերով եւ քաղաքական հնարաւոր բոլոր լծակներով, ապահովել 2020 Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեան պահանջների իրականացումը՝ հաշուի առնելով նաեւ վերջինիս՝ որպէս յայտարարութիւնը ստորագրած պետութեան ղեկավար հանդիսանալու եւ, դրանով իսկ՝ յայտարարութեան պահանջների գործադրման երաշխաւոր լինելու հանգամանքը:

Դիմում ենք ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագոյն յանձնակատար Ֆիլիփո Կրանդիին՝ ադրբեջանական վերահսկողութեան ներքոյ գտնուող տարածքներից տեղահանուած հայ բնակչութեան վերադարձը կազմակերպելու, վերահսկելու եւ ապահովելու, ինչպէս նաեւ վերադարձող անձանց անվտանգութեան ապահովման միջազգային կիրառելի երաշխիքների ներդրմանը, այդ թում՝ խաղաղապահ ուժերի տեղակայմանը աջակցելու նպատակով:

Միեւնոյն ժամանակ, Գերագոյն յանձնակատարի ուշադրութիւնն ենք հրաւիրում այն փաստի վրայ, որ Ադրբեջանի իշխանութիւնները ներկայիս իրականացնում են մեր բնակավայրերում Ադրբեջանցիների ապօրինի վերաբնակեցման ծրագրեր՝ խոչընդոտելով մեր վերադարձը եւ ապօրինաբար յափշտակելով մեզ պատկանող սեփականութիւնը:

Սոյն նամակը ներկայացնում ենք որպէս Արցախում 2020 թուականի 44-օրեայ եւ առաջին պատերազմի հետեւանքով փախստական դարձած եւ բռնի տեղահանուած անձանց կողմից ստեղծուած, նրանց շահերը ներկայացնող, իրաւունքների պաշտպանութեամբ զբաղող եւ նրանց անուցից հանդէս եկող կազմակերպութիւններ»:

Նամակը ստորագրած հասարակական կազմակերպութիւններն են՝ «ԼՂՀ փախստականների միաւորում», «Մայրութիւն», «Կաճառ գիտական կենտրոն», «Կանանց եւ երեխաների աջակցութեան եւ զարգացման կենտրոն», «Փախստականների միաւորում յանուն արդարութեան», «Փախստական կանանց ընկերակցութիւն», «Մեր տուն», «Հագրութի ապարեւազրաւում», «Հագրութի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն»: ■

ՄՈՍԿՈՒԱ

ՄԻՐԶՈՅԵԱՆ՝ ԼԱԻՐՈՎԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄԻՆ ԸՍԱԾ Է. «ԱԶԵՐՊԱՅՃԱՆԻ ՆՊԱՏԱԿԸ ԱՐՅԱԽԻ ՄԷՋ ՑԵՂԱՅԻՆ ԶՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՆ Է»

Մարտ 20-ին, Մոսկուայի մէջ Ռուսաստանի իր պաշտօնակից Սերկէյ Լաւրովի հետ հանդիպումին՝ Հայաստանի Արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեան յայտարարած է, թէ Ազերպայճան կ'ուզէ Արցախի մէջ ցեղային զտում իրականացնել:

Ան ընդգծած է, որ Հարաւային Կովկասի իրավիճակը առաւել սրողը Ազերպայճանի յարձակողական հռետորաբանութիւնն է, որ կը դրսեւորուի ամէնէն բարձր մակարդակով եւ ազերպայճանական կողմի շարունակուող ռազմական գրգռութիւններով ո՛չ միայն Արցախի, այլ նաեւ Հայաստանի ինքնիշխան տարածքին նկատմամբ:



Լաւրով-Միրզոյեան մամուլի միացեալ ասուլիսէն

«Բերձորի միջանցքի փակումով՝ Ազերպայճան կը խախտէ եռակողմ յայտարարութիւններով ստանձնած պարտաւորութիւնները: Արցախի էլէկտրականութեան եւ կազմի մատակարարման խափանումները կը վկայեն Պաքոյի նպատակներուն մասին. խօսքը կը վերաբերի Արցախի մէջ ցեղային զտում իրականացնելուն», – նշած է Միրզոյեան:

Ան աւելցուցած է, որ այդ ենթահողին վրայ առաւել կը շեշտուի գոյացած համաձայնութիւնները գործադրելու հրամայականը, ներառեալ՝ Բերձորի միջանցքին ապաշրջափակումը: Հայաստանի Արտաքին գործոց նախարարը յիշատակած է նաեւ ՄԱԿ-ի Արդարադատութեան ատենանիս որոշումը, որ Ազերպայճանին կը պարտադրէ ապահովել մարդոց, երթեւեկի միջոցներու եւ բեռներու ազատ տեղաշարժը՝ Բերձորի միջանցքով:

Միրզոյեան ցատով նշած է, որ գործնականին մէջ 2020 նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեան մէջ որեւէ կէտ չկայ, որ Ազերպայճան խախտած չլլայ, թուարկելով հրադադարի պարբերական խախտումները, Հայաստանի տարածքներու բռնազրուումը, Բերձորի միջանցքի ապօրինի փակումը, Հայ ռազմագերիները ապօրինի նախարարական բանտարկելը, տարածաշրջանային հաղորդակցութիւններու բացման արգելք հանդիսանալը, ինչպէս նաեւ միջազգային ենթակառուցներու ստեղծումը խախտելը, որու հետեանքով հայ գաղթականները չեն կրնար վերադառնալ այն բնակավայրերը, որոնք 44-օրեայ պատերազմին անցած են Ազերպայճանի վերահսկողութեան տակ:

«Ազերպայճանական կողմը իր գրգռութիւններով կը հարուածէ տարածաշրջանին մէջ մնայուն խաղաղութիւն եւ կայունութիւն հաստատելու ջանքերը: Այս իրադրութեան մէջ կ'ուզեմ ընդգծել Հայաստանի դաշնակիցներուն եւ գործընկերներուն կողմէ աշխուժ քայլերու ձեռնարկելու անհրաժեշտութիւնը, որպէսզի Ազերպայճան կատարէ իր պարտաւորութիւնները եւ դադարեցնէ ուժի գործադրման կամ ուժի սպառնալիքի կիրարկման գործողութիւնները», – ըսած է Միրզոյեան: ■

ՓԱՇԻՆԵԱՆ-ՊԼԻՆՔԸՆ ՀԵՌԱԶԱՅՆԱՅԻՆ ԶՐՈՅՑ

Մարտ 20-ին, վարչապետ Փաշինեան հեռաձայնային զրոյց ունեցած է ԱՄՆ-ու Արտաքին գործոց նախարար Պլինքընի հետ:

Զրուցակիցները քննարկած են Ազերպայճանի կողմէ Բերձորի միջանցքի ապօրինի շրջափակման հետեանքով ստեղծուած մարդասիրական ճգնաժամին վերաբերող հարցեր: Անոնք միտքեր փոխանակած են Հայաստան-Ազերպայճան յարաբերութիւններու կարգաւորման, տարածաշրջանի հաղորդակցութեան ուղիներու բացման հեռանկարներուն շուրջ: Պլինքըն վերահաստատած է Բերձորի միջանցքը անյապաղ վերաբանալու մասին իր կոչը եւ ընդգծած, որ Ուաշինկթըն պատրաստակամ է շարունակելու աջակցութիւնը վերոնշեալ հոլովոյթներուն:

Փաշինեան մտահոգութիւն յայտնած է վերջին շրջանին Ազերպայճանի կողմէ կրկնուող յարձակողական հռետորաբանութեան կապակցութեամբ: Նշենք, թէ յաջորդ օրն ալ տեղի ունեցած է Ալիեւ-Պլինքըն հեռաձայնային զրոյցը: ■

ԻՐԱՅԷԼ

ՀԱՅՖԱՅԻ ՄԷՋ ԲԱՑՈՒՄԸ ԿԱՏԱՐՈՒԱԾ Է «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ»-ԻՆ

Մարտ 20-ին, Իսրայէլի Հայֆա քաղաքին մէջ բացումը կատարուած է «Հայոց ցեղասպանութեան հրապարակ»-ին, հակառակ Թել Ավիվի Թուրքիոյ դեսպանութեան կողմէ գործադրուած ճնշումներուն: Կուրը կը հաղորդէ տեղւոյն Հայ դատի յանձնախումբը:



Բացման արարողութեան ներկայ եղած են Հայֆայի քաղաքապետ էյ-նաթ Քալիշ-Ռոթթեմ, քաղաքային խորհուրդի անդամներ, Իսրայէլի մէջ Հայաստանի դեսպան Արման Յակոբեան, Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան ներկայացուցիչներ, Երուսաղէմի Հայ դատի յանձնախումբի եւ հայ համայնքի անդամներ, ինչպէս նաեւ Հայֆայի տարբեր համայնքներու ներկայացուցիչներ:

Նշենք, թէ Մարտ ամսուան սկիզբը Հայֆայի քաղաքային խորհուրդը միաձայնութեամբ քուէարկեց 1915-ի Հայոց ցեղասպանութիւնը պաշտօնապէս ճանչնալու եւ քաղաքին մէջ զոհերու յիշատակին յուշարձան բարձրացնելու որոշում:

Այսպէսով Հայֆան կը հանդիսանայ Իսրայէլի երկրորդ քաղաքը, որ ճանչցած է Հայոց ցեղասպանութիւնը Փեթա՛ Թիբօլայէն ետք (Թել Ավիվի հարաւ-արեւելեան շրջանը), ուր 2020 Ապրիլին զետեղուած է զոհերու յիշատակին նուիրուած յուշարձանը: ■

ԶՈՒԻՑԵՐԻՍ

«ԱԻՐՈՐԱՅԻ ԼՈՒՍԱԲԱՅԸ» ԺԸՆԵԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱԽԱՆՑ ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՕՆԻ ԳԼԽԱԻՐ ՄՐՅԱՆԱԿԱԿԻՐ

Բեմադիր Իննա Սահակեանի «Արորայի լուսաբացը» վաւերագրական-պատկերաշար (animation) ֆիլմը՝ Մարտ 10-19 Ժընեւի մէջ տեղի ունեցած Մարդկային իրաւանց շարժապատկերի միջազգային փառատօնին (FIFDH) արժանացած է գլխաւոր մրցանակին: Կուրը հաղորդած են Հայաստանի Ազգային շարժապատկերի կեդրոնէն:

Բեմադիր Սահակեան յայտարարած է, թէ շարժանկարի եւ մարդկային իրաւանց նուիրուած փառատօնին ստացուած այս մրցանակը առանձնայատուկ է իրենց համար: «Արորա կը պայքարէր մարդկութիւնը կենդանի պահելու համար՝ փորձելով իր ցարը ամոքել պատատին վրայ, եւ այդ կը նշանակէ, որ անոր առաքելութիւնը դեռ կը շարունակուի եւ երբեք պիտի չմոռցուի» – ըսած է ան:

Հայաստանի, Լիթուանիոյ և Գերմանիոյ միացեալ արտադրութիւն «Արորայի լուսաբացը» կը պատմէ Արորա Մարտիկանեանի արտասովոր պատմութիւնը, որ վերապրած է Հայոց ցեղասպանութիւնը դեռահաս տարիքին, եւ աւելի ուշ հասնելով Հոլիվուտ, հոն 1919-ին նկարահանուած համր ֆիլմի մը մէջ «պատմած է» ջարդը:

«Արորայի լուսաբացը» ժապաւէնին իրագործումը կարելի դարձած է Զօրեան հիմնարկի ակադեմական ներդրմամբ եւ հիմնուած է անոր Բանաւոր պատմութեան արխիւին վրայ: ■



ԵՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ԵՒ ՍՓԻՌՔԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ ՀԱՅԱՆՕՍՈՒԹԵԱՆ ՄԱՐՏԱՀՐԱԲԷՐԸ

ԵՐԿՁԱՅՆ ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝ ԱԼՖՈՐՎԻԼԻ «ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ-ԱՐԱՊԵԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ՀԱՅԵՐԷՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

ՆՈՐԱ ՍԱՐԱՑԵԱՆ-ԹԱՇՃԵԱՆԻ

ԵՒ ԳԱԼՈՒՍՏ ԿԻԼՊԷՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՀԱՅԵՐԷՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

ԱՆԻ ԿԱՐՄԻՐԵԱՆԻ ՀԵՏ

Փետրուար 6-14, Ալֆորվիլի «Սուրբ Մեսրոպ-Արապեան» վարժարանին մէջ տեղի ունեցած էր Եւրոպայի հայկական վարժարաններու հայերէնի ուսուցիչներու վերապատրաստութեան սեմինար մը, նախաձեռնութեամբ Գալուստ Կիլպէնկեան հիմնարկութեան: Սփիւքի արեւմտեան ափերու հայկական համայնքները Հայաստանի անկախութենէն ի վեր հայաստութեան տեղատուութեան մէջ կը գտնուին: Արեւմտահայերէնը տակաւին արմատ չենտած՝ Հայաստանէն արեւելահայաստաններու զանգուածային արտագաղթը լեզուային նոր իրավիճակ մը ստեղծած է, չըսելու համար լեզուային խառնարան մը, ուր հայերէնի ուսուցումը, հայերէնի ուսուցման համակարգը այս իրականութիւնը բնաւ չէ մարսած: Թերեւս, արեւմտահայերէնի ուսուցման արդիականացումը նախաքայլն է հարցը դպրոցական մակարդակին քննարկելու եւ լուծումներ գտնելու:

«ՆՅ»- Եւրոպայի հայկական վարժարաններու հայերէնի ուսուցիչներուն վերապատրաստութեան երկրորդ սեմինարն է, որ տեղի ունեցաւ Փարիզեան շրջանի Ալֆորվիլի «Սուրբ Մեսրոպ-Արապեան» վարժարանին մէջ: Ինչպէ՞ս ծագեցաւ այս ծրագիրը իրականացնելու գաղափարը:

Նորա Սարաֆեան-Թաշճեան - Մեր դպրոցներուն մէջ արեւմտահայերէնի ուսուցման եւ փոխանցման մտահոգութիւնը նոր չէ. նման համախմբումներ առիթ կը ստեղծեն փոխլսումներու, քննարկումներու եւ վերլուծումներու ճամբով կրթական համակարգը այժմէականացնելու եւ ներկայ կեանքի պայմաններուն համընթաց պահելու: Եւրոպայի տարածքին գործող հայկական վարժարաններուն հայերէնի ուսուցիչներուն համար կազմակերպուած այս սեմինարը իր տեսակին մէջ երկրորդն է: Ամէն ծրագիրի նման, այս մէկը եւս պահանջ մը, բաց մը լրացնելու գործնական քայլ մըն է:

Անի Կարմիրեան - Գալուստ Կիլպէնկեան հիմնարկութեան Հայկական բաժանմունքը տասը տարիէ ի վեր յարատեւ ձեւով կիբանանի, Ֆրանսայի, Յունաստանի, Գանատայի, Միացեալ Նահանգներու, Արժանթինի, Պոլսոյ եւ այլ գաղութներու ուսուցիչներու եւ տնօրէնութիւններու կողքին կ'աշխատի եւ իրենց հետ ու իրենց ուղղուած զանազան մանկավարժական ծրագրեր կը մշակէ: Բնականաբար, կ'աշխատակցինք նաեւ արեւմտահայերէնի զարգացման ի նպաստ ջանք շինալող զանազան կառույցներու հետ:


2020-ի աշնան սկսանք նաեւ առցանց հարթակ մը, ուր կը կազմակերպենք նորարար մանկավարժական նիւթեր շօշափող առցանց հանդիպումներ: «Ուս-հարթակ»-ի հանդիպումներուն կը հետեւին Սփիւքի չորս ծագերէն մասնակիցներ: Տարիներու ընթացքին վստահութեան վրայ հիմնուած ամուր կապերու արդիւնք են նաեւ այս ծրագրերը: Անոնց պահանջներէն մեկնելով սկսաւ գործնականօրէն եւ միասնաբար աշխատելու ընթացքը: Այսպէս է նաեւ որ Եւրոպայի միօրեայ վարժարաններու երկու սեմինար-աշխատանոցներ տեղի ունեցան, մէկը՝ 2022-ին Զաւարեան ազգային վարժարանի (Գոքինիա, Յունաստան) եւ միւսը՝ 2023-ին Սուրբ Մեսրոպ Արապեան վարժարանի (Ալֆորվիլ, Ֆրանսա) պատերէն ներս, տասը ամիս տարբերութեամբ:

«ՆՅ»- Ի վերո՞ւստ մտածուած ծրագիր մըն է, թէ՞ հայերէնի ուսուցիչներէն եւ կամ տնօրէնութենէ պահանջուած: Թերեւս ալ ծնողներէ՞ եւ աշակերտներէ՞:

Ն.Ս.Թ.- Թերեւս բոլորը միատեղ. հայերէնի դասաւանդման մեթոտաբանական լուծումներուն շուրջ քննարկումներ կատարելը բոլոր մակարդակներուն շօշափուած թեմա է եւ լուրջ մարտահրաւէր: Այդ պատճառով նման հանդիպումներ լաւագոյն վայրն են՝ վերոնշեալ հար-

ցերը սեղանին վրայ դնելու, տարբեր տեսակէտներ եւ փորձառութիւններ լսելով հարստանալու, նոր մեկնարկներու եւ փոփոխութիւններու ընթացք տալու:

Ա.Կ.- Պահանջը ստեղծելու հարց մըն ալ կայ, մինակութեան եւ մասամբ յուսալքման սահմաններէն դուրս ելլելու խնդիր մը: Հանդիպումները շարժումի վերածելու միտում մը: Ուսուցիչները միշտ վերապատրաստման պահանջը կը զգան: Բնականաբար հայերէն լեզուին կամ սփիւքեան պայմաններուն յատուկ երեւոյթ մը չէ այդ: Աշխարհի բոլոր երկիրները շարունակ վերապատրաստման ծրագրեր կը հրամցնեն իրենց ուսուցիչներուն, այժմէականացնելու նպատակով իրենց դպրոցական համակարգը: Հայերէն լեզուի ուսուցիչները, իրենք, յաճախ լքուած են, չունին այդ կարելիութիւնը կողք-կողքի գալու, գիրար լսելու, փորձառութիւններ փոխանակելու, նոր ճամբաներ փնտռելու: Մեր նպատակն էր ուրեմն միջավայր մը ստեղծել, ուր կարելի ըլլար այդ պակասը գոցել. արդիական մօտեցումով ուսուցիչներուն առիթը տալ շարունակական ձեւով ներկայ ըլլալու, խմբային ուժ մը կազմելու, հաղորդակցելու նաեւ, միասին աշխատելու, եւ այս բոլորը հաճոյքով վայելելու:



Եւրոպայի հայկական վարժարաններու հայերէնի ուսուցիչներու վերապատրաստութեան սեմինարի մասնակիցներուն խմբային յուշանկարը

«ՆՅ»- Այս ծրագիրը նախատեսուած է Եւրոպայի հայկական վարժարաններու հայերէնի ուսուցիչներուն համար: Անցեալ տարի սկսաք, Յունաստան, այս տարի Փարիզ, ինչպէ՞ս կը գնահատէք մասնակցութիւնը:

Ն.Ս.Թ.- Այս անգամ մասնակցող ուսուցիչներուն թիւը գրեթէ կրկնապատկուեցաւ, տրուած ըլլալով, որ Փարիզ քաղաքի եւ անոր շրջակայքը գտնուող միօրեայ վարժարաններն ալ բերին իրենց մասնակցութիւնը:

Ա.Կ.- Միջոցառումը խանդավառ էր, դրական, աշխուժ: Նախորդ հանդիպումին մասնակցողները անհամբեր կը սպասէին միասին ըլլալու, միասին աշխատելու նոր առիթի մը: Եւ տարւոյն ընթացքին՝ կապի մէջ մնացին, իրենց փորձառութիւնները փոխանակեցին: Շատեր իրենց աշխատելու ձեւին մէջ նորութիւններ ներմուծած էին, այդ մասին իմաց տալու անհրաժեշտութիւնը կը զգային նաեւ:

«ՆՅ»- Ուսուցչական ասպարեզը ի՞նչ պատկեր կը պարզէ, կոչումներ կա՞ն: Ասպարեզը գրաւչութիւն ունի՞: Եւրոպահայութեան մէջ խնդրին գիտակցումը ի՞նչ աստիճանի է:

Ն.Ս.Թ.- Հայերէն դասաւանդող ուսուցիչի կարիքը կը զգացուի ամէնուրեք: Եթէ կը հաւատանք, որ հայապահպանման հիմնական առաքելութիւններէն մէկը վստահութիւնն է հայ ուսուցիչին, ապա պէտք է հաւաքական գիտակցութիւն եւ ճիգ՝ սատար կանգնելու այս ասպարէզին:

Ա.Կ.- Այո՛, նոյն պահանջը բոլորին համար ի զօրու է, ոչ միայն Հայերուն: Բայց երկիրներ կան, ուր ուսուցիչին հանդէպ յարգանքը աւելի զգալի է քան այլուր, օրինակ՝ Ֆինլանտիան: Ինչ որ կը նշանակէ, թէ երախային հանդէպ յարգանքն ալ աւելի զգալի է: Խնդիրը միշտ երախայակեղորոն դաստիարակութիւն մը ջամբել է, որպէսզի կատարուած աշխատանքը իմաստ մը ստանայ վերջապէս: Ինչ որ իր կարգին՝ վերապատրաստութիւն կը պահանջէ, կանոնաւոր ձեւով: Միասնաբար աշխատելով, իրենց աշխատանքին գեղեցիկ արդիւնքները տեսնելով, ուսուցիչները անտէր չեն զգար:

«ՆՅ»- Այս ծրագրին մասնակցելու համար դպրոցի եւ խնամակալութեան արտօնութիւնը անհրաժեշտ է, թէ՛ ուսուցիչները ազատօրէն անձնական նախաձեռնութեամբ կը դիմեն:

Ն.Ս.Թ.- Դպրոցներու տնօրէնութիւններուն դիմեցինք այս հանգրուանին եւ իրենք փոխանցեցին իրենց կողմէ նշանակուած մասնակիցներուն անունները:

Ա.Կ.- Մինչ այդ ըսենք որ Ուս-հարթակի առցանց հանդիպումներուն մասնակցութիւնը ամբողջովին ազատ է, ու կանոնաւոր կերպով հետեւելու որոշումը անձնական նախաձեռնութիւն է: Ֆրանսայի հանդիպումը, ինչպէս անցեալ տարուան Յունաստանինը, մեթոտները միասնաբար տեսնելու եւ կիրարկելու առիթը ընծայեց: Առցանց սեմինարը եւ այս դէմ առ դէմ հանդիպումները զիրար կ'ամբողջացնեն խորքին մէջ:

«ՆՅ»- Երախայակեղորոն մանկավարժութիւնը յատուկ մօտեցում մըն է, որ նույնիսկ ֆրանսական դպրոցներու մէջ չէ տարածուած: Որքանո՞վ այս ծրագիրը ընդունելութիւն կը գտնէ դպրոցներէն ներս:

Ն.Ս.Թ.- Կրթական համակարգը ուրիշ բնագաւառներու նման մասնակից է ընկերային կեանքի զարգացումներուն: Ուստի, ժամանակի պահանջ կը դառնայ նոր ոճերու կիրարկումը նաեւ դպրոցներէն ներս: Երախայակեղորոն մօտեցումով երախան գործուն մասնակցութեամբ կը հետազօտէ եւ կը կազմաւորէ իր գիտելիքները, կը բարելաւէ իր հմտութիւնները: Մանկավարժական այս մօտեցումով կարգապահական, հրահանգներով առաջնորդուող դասաւանդութիւնը կը փոխարինուի հետաքրքրական միջավայր մը ստեղծելու աշխատանքային ձեւով:

Ա.Կ.- Ժիշդ է որ Ֆրանսայի մէջ այս մօտեցումը ընդհանրապէս յառաջդիմական երանգներ ունի, մինչեւ իսկ յեղափոխիչ հանգամանք մը: Բայց կարեւոր է նաեւ ու մանաւանդ մեր պարագային: Ըսեմ կարճ ու կտրուկ, մէկ նախադասութեամբ. խնդիրը հայերէն սորվիլ չէ, հայերէնով սորվիլ է, հայերէնով բացայայտել է աշխարհն ու ինքզինքը: Հայերէնով կազմուիլ է որպէս անձնաւորութիւն: Հայերէնով մասնակցիլ է աշխարհի թո՛ղմանին: Այդ է որ պիտի սորվեցնէ դպրոցը: Պիտի սորվեցնէ դուրս ելլել դպրոցէն: Պիտի սորվեցնէ իմաստաւորել եւ արդիւնաւորել երկրեզուութիւնը:

«ՆՅ»-Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան Հայկական բաժանմունքի ծրագիրը վերապատրաստման ծրագիր է: Այսօր, ընդհանրապէս, ինչպէ՞ս կը պատրաստուի հայերէնի ուսուցիչ մը:

Ա.Կ.- Երկար տարիներէ ի վեր՝ ուսուցիչներու վերապատրաստման ուղղութեամբ ծրագրեր մշակած է Բաժանմունքը: Պէյրութ Հայկազեան համալսարանը եւ Կիբանանի Ամերիկեան համալսարանը, Փարիզ՝ Ինալքօ. ահաւասիկ երեք հաստատութիւններ, որոնց հետ վերապատրաստման ծրագրեր մշակած ենք տարիներու ընթացքին: Պէյրութ Կիբանանի ուսուցիչներուն ուղղուած են այդ ծրագրերը, իսկ Ինալքոյի պարագային՝ Զարմանազան ամառնային ճամբարի մասնակիցներուն, որոնք Սփիւքի զանազան գաղութներէ կու գան: Ամերիկայի պարագային Արեւելեան եւ Արեւմտեան Ուսումնական խորհուրդներուն եւ Արժանթինի Հայկական հաստատութիւններու ընկերակցութեան հետ աշխատակցած ենք: Բոլորը իրարու կապուած օղակներ են: Վերապատրաստման ծրագրերուն յղացման աշխուժ մասնակիցները յաճախ իրենք՝ ուսուցիչներն են: Զեռք-ձեռքի աշխատանքը շատոնց սկսած է եւ բաւական ճամբայ կտրած ենք արդէն իսկ:

Ն.Ս.Թ.- Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան Հայկական բաժանմունքը ունի հայերէնի ուսուցիչներու վերապատրաստման բազմաթիւ ծրագրեր, որոնց ծիրին մէջ պէտք է գիտարկել սոյն սեմինարը: Թրինակի համար, հերթական գրութեամբ երրորդ տարին ըլլալով կը շարունակուի «Ուս-հարթակ»-ը, որ ուսուցիչներուն կը փոխանցէ մանկավարժական, հոգեբանական, ստեղծագործական գիտելիքներ եւ գործիքներ: Ահաւասիկ այստեղ պէտք է յիշել «Ձևտուկ» շտեմարանը, որ կը բովանդակէ արեւմտահայերէնով բժախնդիր եւ մասնագիտական շափանիշերով պատրաստուած մանկավարժական գործիքներ:

«ՆՅ»- Ի՞նչ են մինչեւ հիմա հանրութենէն եկած արձագանգները. աւելին՝ արձագանգ կա՞ն, թէ՞ անտարբերութիւն է կամ սպասման վիճակ՝

տեսնելու թէ ի՞նչ պիտի ըլլայ վերջը:

Ն.Ս.Թ.- Ամէնէն վստահելի արձագանգը երախային ժպիտն ու մասնակցութեան եռանդն են: Ամէն փոփոխութիւն ժամանակի եւ համբերութեան կը կարօտի: Այս սեմինարի ծիրէն ներս հանդիպում մը կատարեցինք նաեւ ծնողներուն հետ՝ ներկայացնելու եւ ծանօթացնելու համար մանկավարժական նոր մօտեցումներն ու միջոցները: Վերջապէս, ծնողին եւ ուսուցիչին միջեւ կապը եւ անոնց ներդաշնակ գործակցութիւնը կարեւոր հիմք է երախային կազմաւորումի յառաջընթացին մէջ դրական զարգացում ապահովելու համար:

Ա.Կ.- Էական կէտ մըն է այստեղ շոշափուածը ու ես ալ իմ կարգիս կ'ուզեմ ընդգծել հետեւեալը. մեր աշխատանքը կ'իմաստաւորուի իր շարունակականութեամբ, ընթացքի մէջ ըլլալու իրողութեամբ:

«ՆՅ»- Որքանո՞վ այս ծրագիրը կը յարմարի տեղական՝ ֆրանսական կամ յունական կրթական ծրագրին:

Ն.Ս.Թ.- Իբրեւ ֆրանսայի մէջ գործող երկրեզու դպրոցի պատասխանատու կ'ուզեմ ընդգծել, որ կրթական ծրագիրը եւ անոր մատուցման մարտավարութիւնը պէտք է իրարմէ տարանջատել: Կ'օգտուինք ֆրանսական ծրագրին բովանդակութենէն՝ հետեւելով մանկավարժական նոր ոճերու թելադրանքներուն, որոնց շնորհիւ իւրաքանչիւր երախայ առիթ կ'ունենայ կազմաւորելու իր անհատականութիւնը եւ ինքնուրոյն զարգացումը:

Ա.Կ.- Պէտք է մեկնիլ երախայէն, նկատի առնել անոր յունական կամ ֆրանսական կրթական միջավայրէն ներս արդէն իսկ ամբարած ընդհանուր զարգացումը, դպրոցական գիտելիքները, կեանքի փորձառութիւնը եւ հետաքրքրութիւնները, այդ բոլորը հայերէնով ալ զարգացնելու ճամբաներ գտնելու համար, աշխարհը հայերէնով ալ յայտնաբերել կարենալու համար. «Երկու լեզու, մէկ աշխարհ»⁽¹⁾ ստեղծելու համար ահաւասիկ հրամայականները: Երկրեզուութիւնը հարստութիւն է: Մեզի կը մնայ զարգացնել բոլոր ունակութիւնները որոնք էական են. տարբեր տեսանկիւններէ գիտելու ու մեկնաբանելու կարողութիւնը մարզել, քննադատական մտածողութիւնը զօրացնել, աշխարհայայտեցող ընդլայնել, յիշողութիւնը եւ զգայարանները աշխուժ պահել, համամարդկային ընդհանուր գիտութիւնը անընդհատ զարգացնել հայերէնի ընդմէջէն: Հայերէնը տեղական լեզուի կողքին պէտք է խաղայ ամենալայն իմաստով զարգացման լեզուի մը դերը, լեզուի մը որ կը բանայ տուեալ երկրին մէջ կիրարկուած կրթական ծրագրերուն գոց պատուհանները, որ կը փոխանցէ սորվելու եւ աշխարհին բացուելու հաճոյքը: Հայերէնը իբրեւ միջոց եւ ոչ իբրեւ նպատակ տեսնելու պարագային, բոլոր դռները բաց են մեր առջեւ:

«ՆՅ»- Ընդարձակ եւ համապարփակ ծրագիր է, զանձատրուումը ինչպէ՞ս կ'ապահովուի: Միայն Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան կողմէ է, թէ՞ լրացուցիչ այլ աղբիւրներ ալ կան:

Ն.Ս.Թ.- Հիմնական եւ գլխաւոր օժանդակութիւնը տրամադրուեցաւ Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան Հայկական բաժանմունքին կողմէ, իսկ սոյն աշխատանոցին կազմակերպման նեցուկ կանգնեցան նաեւ «Սուրբ Մեսրոպ-Արապեան» վարժարանի խնամակալութիւնը, տնօրէնութիւնը, պաշտօնէլութիւնը, ուսուցչակազմը, շրջանաւարտները, ծնողները, ինչպէս նաեւ «Ս. Պօղոս-Պետրոս» եկեղեցւոյ հոգաբարձութիւնն ու տիկնանց յանձնախումբը: Կային բազմաթիւ եւ բազմապիսի կազմակերպական աշխատանքներ, որոնց շուրջ համախմբուեցան գաղութէն նուիրեալ անձեր եւ ամենայն համեստութեամբ նպաստեցին այս ծրագրի հեզասահ ընթացքին: Յատուկ շնորհակալութիւն նաեւ Ալֆորվիլի «Հայ մշակոյթի տուն»-ին եւ յատկապէս Ալֆորվիլի քաղաքապետ՝ Լիւք Գարվուսսին եւ երեսփոխան՝ Իզապել Սանթիակոյին, որոնք բարոյապէս եւ գործնապէս քաջալերեցին սոյն նախաձեռնութիւնը:

Ա.Կ.- Ինչպէս նշեցինք արդէն իսկ՝ արեւմտահայերէնի զարգացումը Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան Հայկական բաժանմունքին անցեալ եւ ապագայ գործունէութեան առաջնահերթութիւններէն մէկն է: Բաժանմունքի տնօրէնին՝ Ռազմիկ Փանոսեանին վերջերս լոյս տեսած գեկոյցէն քաղելով՝ Բաժանմունքի ապագայ գործունէութեան «հիմնասիւններ»-էն մէկը պիտի ըլլայ՝ «Երախայութեան արեւմտահայերէնի կենսունակութիւնը՝ հովանաւորելով լեզուի իւրացումի եւ ուսուցիչներու զարգացման ծրագրերէն՝ մինչեւ լեզուն ամրապնդող թեքնաբանական նախաձեռնութիւններ»⁽²⁾:

Հարցազրոյցը վարեց՝
ԺԻՐԱՅԻ ՉՈՒԱՔԵԱՆ ■

(1) Տե՛ս. Ա. Կարմիրեան՝ «Երկու լեզու, մէկ աշխարհ», «Յառաջ Միտք եւ Արուեստ», 7 Մայիս 1995: ԱՐԱՄ ընկերակցութեան արխիւներուն մէջ նշեալ թիւին թուայնացուած տարբերակը տեսնելու համար՝ գործածել առկից տրուած գաղտնագիրը.



(2) Տե՛ս. «Տասնամեայ գործունէութիւն. Զեկոյց Գ. Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքի Տնօրէն՝ Ռազմիկ Փանոսեանի կողմէ»: «Նոր Յառաջ», (թիւ 1850) Փարիզ, 2023 Մարտ 9: Կամ՝ «Նոր Յառաջ»-ի կայքէջին վրայ լոյս տեսած առցանց տարբերակը՝ առկից գաղտնագրով.



ՊՐՆ. ՅԱԿՈՒ ԶՈՒԱՔԵԱՆԻ 75-ԱՄԵԱԿԻ ՅՈՒՐՆԵԱՆՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Շաբաթ, Մարտ 18-ի երեկոյան ժամը 6-ին, Երեւանի Հայ Աւետարան-չական կեդրոնին մէջ (Բաղրամեան 18), տեղի ունեցաւ պրն. Յակոբ Զոլաքեանի ծննդեան 75-ամեակին նուիրուած յոբելինական հանդիսութիւնը՝ կազմակերպութեամբ խումբ մը հայրենաբնակ քեսապցի եւ մուսալեռցի երիտասարդներու:

Դահլիճը լի էր քեսապցիներով, մուսալեռցիներով, հայրենի անձնաւորութիւններով, քաղաքական գէմքերով, - ի շարս որոնց՝ Սուրիոյ դեսպան տիկ. Նորա Արիսեան,- կղերական դասու ներկայացուցիչներով եւ մանաւանդ պրն. Զոլաքեանի աշակերտներով:

Ընթերցուեցաւ Բերիոյ թեմի առաջնորդ Մակար եպիսկ. Աշգարեանի օրհնութեան գիրը: Հանդիսութեան մտաւորապէս երկու ժամուան տեւողութեան ընթացքին հանդիսավարներ՝ Դալար Քալուկեան եւ Վահան Մանճիկեան մի առ մի բեմ հրաւիրեցին օրուան հանդիսութեան մասնակիցները:

Յոբելեարին վաստակը ներկայացուց քեսապցի գրող՝ Յակոբ Քորթմոսեան, որ խօսքը աւարտեց Քեսապի բարբառով երախտագիտական արտայայտութիւններով: Հանդիսութիւնը համեմուեցաւ քեսապի օրօրոցային երգերով՝ Լուսինէ Օրդուխանեանի կատարումով, բանաստեղծութեամբ՝ «Զօն Յակոբ Զոլաքեանի» Պարոյր Սթանպուլեանի կատարումով: Ընթերցուեցան «Քեսապի երեք օրերը» եւ «Յամբած աղբիւրը նորէն կը բխի» գիրքերէն հատուածներ: Տեսերիզով աշխարհի տարբեր երկիրներէն շնորհաւորանքներով եւ տպաւորութիւններով մասնակցութիւն բերին պրն. Զոլաքեանի նախկին աշակերտներէն մի քանին, զոկոտ. Անդրանիկ Տագէսեան, Այնճարէն հոգեւորականներ եւ այլք: Յուցադրուեցան Քեսապի եւ Մուսա Լեռան հին ու նոր նկարները: Բանաւոր խօսքերով հանդէս եկան Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Հնագիտութեան եւ Ազգագրութեան հիմնարկի տնօրէն՝ Արսէն Բոբոխեան, արուեստաբան Մովսէս Հերկելեան, Մուսա Լեռան Հայրենակցական միութեան երիտասարդական թեւի ներկայացուցիչ՝ Հեղինէ Պապուեան, Քեսապցիներու խօսքը հաղորդեց համագիւղացի Փարէն Յովսէփեան, մուսալեռցիներուն խօսքը փոխանցեց Մուսա Լեռան Հայրենակցական միութեան նախագահ՝ Պերճ Ղազարեան: Բանաւոր խօսքերուն ընթացքին նաեւ պատուոյ գիրք եւ շքանշաններ նուիրուեցան յոբելեարին, ապա հանդիսութիւնը վերջ գտաւ յոբելեարի անմիջական եւ հարազատ խօսքով, զոր կը ներկայացնենք ամբողջութեամբ ստորեւ:

«Ես ուսուցիչ եմ, իմ խօսքը սկիզբ կ'ունենայ, բայց վերջը դժուար է կտահել: Նախ յայտնեմ, որ ես երախտապարտ եմ, միշտ այդպէս եղեր եմ, իմ բոլոր աշակերտներու եւ ուսանողներու հանդէպ, կատշած մնալու իմ ասպարէզին մէջ, մնալու ուսուցիչ: Ատկէ կը սկսի ամէն ինչ: Թէ օրինակ Սուրիոյ մէջ, շաբաթական 36 ժամ, տարբեր դասանիւթերու հետ գործ ունեցող աշակերտը, շաբաթուան ընթացքին միայն չորս ժամ հայերէն պիտի սերտէ: Եւ այդ հայերէնի դասապահը պիտի վերածէ հոգեկան սլացքի, պիտի բացայայտէ իր ինքնութիւնը, իր էութիւնը, քեզմէ պիտի պահանջէ շատ անելի որ դուն կրնաս տալ, եւ դուն աշակերտներէն ամչնալով, պիտի ստիպես ինքզինքիդ անելի պահանջը ըլլալու քու անձիդ հանդէպ, որովհետեւ մեր սերունդները տակաւին հայերէնով կը մտածեն եւ հայերէնով ապրիլ կ'ուզեն, եւ ինձի համար չկայ առհասարակ հայերէնի մայրամուտ: Ես հաւատացած եմ, որ մեր գրպանը գտնուող անձնագիրէն շատ անելի թանկագին է լեզուն՝ մեր բերաններուն մէջ հնչող հայերէնը: Քանի հայերէն կայ կը նշանակէ կա՛նք նաեւ մենք:

Ես աշակերտներէս սորված եմ շատ բան: Օրինակ՝ երբոր դասարանին մէջ կ'ըլլայի, յիշատակներ կը բերէին տղաքը, յիշատակներ տարբեր գիւղերէ, տարբեր արուարձաններէ: Անապատի սերունդի գաւակներ, թողներ, ծոռներ էին, անոնք ապրած էին իրենց հայրերու բոլոր զգացումները: Գիտէին ինչ ըսել է ցեղասպանութիւն եւ տեսած, զգացած էին թէ ինչ կը նշանակէ վերականգնում: Սուրիոյ, Իրաքի, Լիբանանի, Յորդանանի, Պաղեստինի հայութեան գաւակներ էին անոնք: Եւ ահաւասիկ ամէն մէկ տեղէ, արուարձանէ ինձի յիշատակներ կը բերէին երբեմն եւ ես պարտաւոր կը զգայի իրենց այդ գաղթականացներուն, արուարձաններուն, հայանուն գիւղերուն մասին յաւելեալ տեղեկութիւններ ստանալ, որովհետեւ այդ վայրերուն մէջ վերամկրտուեցաւ մեր ժողովուրդը, վերականգնեցաւ հայախօս, թրքախօս, արաբախօս, բարբառախօս հայութիւնը, վերածնաւ հայերէնը:

Ես աշակերտներուս նաեւ շատ բանով պարտական եմ, մանաւանդ իրենց շարադրութիւններու պահերուն եւ կը ցնցուի երբեմն, մանաւանդ կը տեսնէի, թէ իմ դասարանս ամբողջ հայաշխարհ մըն է՝ սա Խարբերդն է, Արաբկիրն է... Կարմիր Ծուկայէն մինչեւ Քեսապ իմ դասարանիս մէջ էր եւ ամէն մէկ աշակերտ կը բերէր ինձի իր արմատներէն պնդ մը խօսք, ասացուածք մը, ասոյթ մը, առակ մը, երգի պատարիկ մը եւ ես կը զգայի որ ցեղասպանութիւնը միայն հայրենիքի կորուստ չէր, միայն մեկուկէս միլիոն նահատակի կորուստ չէր, այլեւ ամբողջ հոգեւոր մշակույթի մը ցեղասպանութիւն էր:

Եւ այդ աշակերտներուս բերած պատարիկները ինձի համար կը դառնային մասունք, եւ իրենց հետ կը վազէի դաշտ, կը հանդիպէի ծերերու, գրի կ'առնէի: Այո՛, եթէ դպրոցը այդ գիւղերէն դուրս ելաւ դէպի ուրիշ քաղաքներ, անոնք իրենց հետ տարին այդ դպրոցն ու եկեղեցին, առանց դպրոցի եւ եկեղեցիի ամէն տեղ անոր ֆիզիքական նոր կերպարանք մը տուին, հակառակ պարագային հայութիւնը չէր կրնար գոյատեւել եւ կը մոռնար հայրենիքի ճամբան: Սփիւքի դպրոցը, յալիտեմապէս, մեզի ցոյց կու տայ հայրենիքի ճամբան:

Որքա՛ն պիտի ուզէի, որ իմ աշակերտներս, որոնք ինձի այդպիսի մասունքներ կը բերէին, գիտունացնային այդ մասունքներով, մեր օրերու շունչով սպրեցնեն իրենց հայրենի երգը, պարը, իրենց դպրոցի աշակերտներուն պատմեն ասացուածքներն ու հեքիաթները:

Շատ, շատ կարելի է խօսիլ: Կը դառնամ, կը նայիմ, թէ ես ի՛նչ ըրի: Կարծես թէ բան մըն ալ ըրած չեմ:



«Նոր Յաւուոյ»

Պէտք է որ նոր սկսիմ:

Մօտ յիսուն տարի առաջ Գալատուրանէն Պաղճաղաս երթալու համար լեռները բարձրացայ: Այնտեղ ունէի բացառիկ ասացող մը՝ Թօփալ Մի-նասը: Գացի հասալ մէկ-երկու ժամ ետք:

Լսաւ- Հը՛, նորէ՛ն եկար:

Լսի- Հա:

Լսաւ- Ինչո՛ւ:

Լսի- Դուն պիտի պատմես, ես գրի պիտի առնեմ:

Լսաւ- Դո՛ւն մնացիր իմ խօսքս գրի առնող:

«Վերի պարտէզի պատն եմ, Ես Աստուծոյ մատն եմ, Մարդիկ վրաս կը ծիծաղին, Երկու պատուելիի հայր եմ»: (Քեսապի բարբառէն թարգմանաբար): Աստուած ողորմի երեքին ալ հոգիներուն, վերջին զաւակը երկու օր առաջ մահացաւ՝ վերապատուելի Եսայի Սարմազեանը:

Լսի- Տեսէք, ես արդէն գրի առի այդ խաղիկը, շարունակեցէք պատմել:

Լսաւ- Տե՛ս, կը պատմեմ, բայց պիտի ըլլաս գարիին պատմութեան պէս:

Լսի- Ի՞նչ է այդ պատմութիւնը:

Լսաւ- Մտիկ ըրէ՛.

«Յորենը պանդխտութեան պիտի երթայ, կը նստի, կը մտածէ. ես պանդխտութեան պիտի երթամ, սակայն այս ժողովուրդը առանց հացի ինչպէ՛ս պիտի ապրի: Կը կանչէ գարին, կ'ըսէ. Աղբարիկս, եկուր, ես պանդխտութեան պիտի երթամ, տեղս հաց կ'ըլլա՛ս մինչեւ որ գամ: Գարին կ'ըսէ. Գլխու վրայ, ատկէ դիւրին բան չկայ, տեղդ հաց կ'ըլլամ մինչեւ որ գաս, բայց ես թոնիր չեմ մտներ, ես սաճի վրայ հաց կ'ըլլամ:

«Յորենը կ'առնէ ցուպը, կ'ելլէ, կ'երթայ ճամբան: Յանկարծ ետեւէն գարին կը կանչէ. Յորե՛ն աղբար, ցորե՛ն աղբար, տեղդ փախաւաւ ալ ըլլա՛մ:

(Գիտէք փախաւաւ ըլլալու համար ամէնէն ընտիր ալիւրը պէտք է): «Յորենը կ'ըսէ. Տղա՛ս, հէլէ սաճին վրայ ե՛լ, յետոյ փախաւաւ ըլլալուն մասին մտածէ»:

Սա անպիտան ասացողը զիս ձեռք կ'առնէր, այսինքն զիս կարգին տեղ կը դնէր: Հիմա անցեր է այսքան տարի, կը մտածեմ որ այդ Թօփալ Մի-նաս ասացողս որքան ճիշդ ըսեր է:

Ես ինչ որ ըրի անհրաժեշտութեան համար ըրի, կը կարծէի որ այդ բոլորը կը կորսուին, կ'երթան եւ մեր սերունդները կը գրկուին անոնցմէ: Ոչ այնտեղ կանաւ կար, ոչ ալ մասնագէտ, ես ինքնաբոլոս կերպով ըրի այն ինչ որ կրցայ եւ Թօփալ Մի-նասին ըսածին պէս՝ Գարիէն տարբեր բան մը ընել չկրցայ՛»:

* * *

Հանդիսութենէն ետք ներկաները վայելեցին քեսապցի եւ մուսալեռցի կիներու պատրաստած հիւրասիրութիւնը:

ԱՆԻ ԲԻԴՈՅԵԱՆ-ՂԱԶԱՐԵԱՆ

ԿԱՄՄՈՒԲ

Վեպ

Վահե ՕՇԱԿԱՍ

Սան Ֆրանսիսքո, 1988

- 3 -

Ու դեռ միւսները, քֆրող, բարկացող, հայհոյող կտրիճ տղաքը որոնք կոմիտէի մէկ նշանին վրայ մինչեւ մահ կ'երթային, տգէտ ու բարի տարօրինակ ձեւով մը... Սեղրակը, Տէլի Յակոբը, Պիկ ճոնը, Սէրժան Կարօն ու միւսները որոնք խումարի միջին պզտիկ սեղաններու շուրջ, աժան օղիի գաւաթներով, կնիկի ծարարը ձեռքերուն մէջ աշխատելով, դիւրին դրամը գրպանները թխմելով, խնդալով, կատակելով ու զէնքը մէջքերին կոխած մէկ-մէկ թաղեր էին նախ իրենց բարութիւնը, յետոյ պատիւը, յետոյ կուսակցութեան պատիւը ու էն վերջը կատաղի անօթութեան մը բռնկած իրենց մարմինները, ետին թողելով միայն երիտասարդ առասպել մը, անուն մը որ Պուրճ Համմուտի սինէմաներու մուտքին խմբուած, աղջիկներուն քսուող սանտուիչ ծամող, իրար վրայ ինկող նիհար, գործաւոր տղոց երեւակայութիւնը կրնար փոխադրել թեքասսի մէջ ու հոն կրնար ֆիլմի հերոսի մը կեանքը ապրիլ մէկ ժամ... բայց առտուան տաք հացին ու սիկարէթի հագին պէս շօշափելի իրականութեան դիմաց երկու փարա չէր արժեր: Սանտուիչի թողութի պէս այդ տղաքը գունտ կ'ընէին զինքը ու իր համբաւը, փողոցի ցեխին կը նետէին զոն չեմ երթար, մի վախճար ըսեր էր, դեռ նայելով կուրիւն: Հինգ ամիս հազիւ անցեր էր ու երեսփոխանական ընտրութիւններուն հնչակեան մարդ մը, դուրս ինկած, բարի աչքերով գիւրուկ մարդ մը փրկեր էր Ակումբին գոց սենեակին մէջ երբ գինով Պէյպի-Ֆուր Աւետիսը արդէն գօտին քաշեր էր ու կը պատրաստուէր ձեռքերը զոն չեմ երթար կրկնած էր միտքէն ու մարդը դուրս տարեր էր ու հօրը յանձներ որ հետը նստի խօսի մինչեւ ժամը հինգ, հին բարեկամներու պէս:

Սրճարանը դեռ կը մրափէր ու կոնակէն սրճեփին խօսակցութիւնը շատոնց ի վեր շարունակուող ձայնի մը տպաւորութիւնը ըրաւ վրան: Կը թմրէր...: Քովի սեղանը երկու բանուոր ցած ձայնով, կոշտ, մաշած գլուխները մօտեցուցած բաներ մը կ'ըսէին իրարու, դուրսէն շնչահեղձ տաքը ներս կ'ապաստանէր, ամէն ինչ հազար անգամ կրկնուած տեսարան էր սպասումի, շեղակի ուշադրութեան, ծուռ կայնած գիտակցութեան, աչքը պզտիկ

պատուհանին վրայ նստած մինչեւ որ լսէր ոտքի ձայնը, տեսնէր անոր արագ, ջղային արտակերպը քալուածքը անկոնք անկուրծք պարագիծը ու ամբողջ ըմբօստ անգետեղելի իգութիւնը որուն համար կօշկակարի աշկերտները ֆուլթպոլի խաղէն դարձին հոգի պիտի տային պիտի խենթեցնամ աւ տաքին... ես դուրս կ'ելլեմ կոր ամիս մը առաջ էր միայն որ իմացեր էր անոր ժամագրութիւններու մասին Մարտոյէն:

- Պարոն Աբօ, նայէ, բան մը պիտի ըսեմ, ամա չպիտի նեղուիս, հա, խօսք տուր քի չպիտի նեղուիս:

- Խօսէ նայիմ:
- Խօսք տուր քի...
- Լաւ:
- Ալիսը...
- Ո՛ր Ալիսը:
- Քոյրիկդ:
- Է ի՞նչ:

- Պարոն Աբօ մի նեղուիր ամա... երէկ գիշեր օրիորդ Ալիսը Պապ Իսրիսէն վար յոյն տղու մը հետ կ'երթար կոր... պօր իջան, հոն ալ տղուն օթոն նստան գացին:

- Թիւր առի՛ր:
- Հա, առի:
- Տուր հէլէ... մարդու բան չ'ըսես հա, չէ նէ... դուն ալ գործիդ գնա՛, անգամ մըն ալ ետեւէն չերթաս... առ սա ոսկին:

Այնպէս որ կառսօնը կը ճանչնար զինքը, միշտ նոյն տեղը օրուայ նոյն ժամուն շաբաթէ մը ի վեր ու սկիզբը կարծեր էր թէ այդ փայլուն մորթով, նուրբ, կոկիկ աղջկայ պէս անվնաս երիտասարդը մասնաւոր յաճախորդի որսորդութեան ելեր էր ու ըսեր էր Ահմէտին որ սկսեր էր շուրջը դառնալ որովհետեւ այդ շրջանին շէկ մագերով, կապոյտ անշեղ նայուածքով հսկայ մարմնով թուրիսթներ կային որոնք կը սլքտային այդ տեղերը հաշիշ ու մանչ փնտռելով... մինչեւ որ մէջքի ատրճանակը տեսէ՛ր էր թէ՞ ան էր որ ցուցուցեր էր մասնաւոր: Ատկէ վերջն էր որ տեսաւ ինչպէս կը նայէր աղջկան, յետոյ տղան ալ տեսաւ, բայց ձայն չ'հանց որովհետեւ անոր արաբերէն խօսելու շեշտէն գիտցեր էր հայ ըլլալը ու անշուշտ զէնքով հայ տղաքը դաշնակ կ'ըլլան, վտանգաւոր են մանաւանդ երբ պատուի հարց ըլլայ, մէկ երկու չեն նայիր:

(Շար. 30)



ԿԸ ՓՆՏՈՒԻ

Անկախ ուսումնասիրող մը հրատարակութեան կը պատրաստէ Միսաք եւ Մելինէ Մանուշեաններու մասին աշխատասիրութիւն մը: Այս շրջանակին մէջ, ան կը փնտռէ անտիպ նիւթեր, արխիւներ, նոյնիսկ ու մա՛նաւանդ անձեր, որոնք ճանչցած են Մելինէն եւ կրնան վկայութիւններ տալ անոր մասին:

Յուրաքանչեւ մանրամասնութեանց համար կապուիլ **06 81 66 57 84** թիւին կամ գրել chymaconsulting@gmail.com հասցէին:

RECHERCHE

Chercheur indépendant prépare une publication sur Missak et Mélinée Manouchian. Dans ce cadre, il recherche des archives, témoignages et documents inédits sur le couple, surtout des personnes ayant connu et rencontré Mélinée Manouchian.

Pour plus d'informations, contacter le **06 81 66 57 84** ou écrire à chymaconsulting@gmail.com.

arnouville

EXPOSITION
Espace Fontaine
1 rue Boishue

D I K R A N
DADÉRIAN
PEINTURES ET GRAVURES

DU 18 AU 26 MARS 2023
14h30 – 18h
Entrée libre

01 30 11 16 16 // ARNOUVILLE95.FR

Icons for Instagram, Facebook, LinkedIn, and YouTube.



Համազգային Փարիզ
ԶԱՏՎՈՒԱՆ ՃԱՇ

Կիրակի, 9 Ապրիլ 2023, ժամը 12.30-ԷՆ սկսեալ
Հայ Մշակույթի Տան ճաշարանը,
17 Պլեո փողոց, 75009 Փարիզ

Ուրախ մթնոլորտ, հապիտախաղ, անակնկալներ

Տեղերը ապահովել հետետեալ թիւերուն հեռաձայնելով՝
06 64 38 00 25 / 06 25 40 70 44

Hamaskaïne Paris
DÉJEUNER DE PÂQUES

Dimanche 9 avril 2023 à partir de 12h30,
au foyer de la Maison de la Culture Arménienne,
17 rue Bleue 75009 Paris

Réservez vos places en appelant au : 06 64 38 00 2 5 / 06 25 40 70 44

«ՆՈՐ ՅԱՌԱԶ»-Ի ԲԱՐԳԱԻԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ
ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ԱՏԱՑԱՆՔ

Պարոն Մհեր Պապեանէն (ԱՄՆ) 500 տողար:

Samedi 1er avril, à partir de 20h

Péniche Anako, Face au 34 quai de
la Loire, 75019 Paris. PAF 10€

Tous en piste !

Soirée de danses arméniennes,
ouverte à tous !



**Au programme: Tamzara,
Papuri, Yarxoushda...**

Large éventail de danses
arméniennes à découvrir. 1/2 heure
dédiée à l'apprentissage



**Atelier
Mgnig**

Dans le cadre du 150^e anniversaire
d'Archag Tchobanian (1872-1954)

Sous le Haut Patronage
du Primat du Diocèse de l'Eglise apostolique arménienne en France,
le Très Révérend Père Krikor KHACHATRYAN

L'ÉGLISE APOSTOLIQUE ARMÉNIENNE DE PARIS
et
L'INSTITUT TCHOBANIAN

Vous invitent à une conférence de

Sèda MAVIAN
(journaliste, historienne et auteur),

sur

Archag TCHOBANIAN
*Défenseur inlassable des droits des Arméniens de France,
durant la Deuxième Guerre mondiale (1940-1944)*

Une conférence issue de l'exploitation de documents inédits
des archives du Musée d'Art et de Littérature de Erevan

Vendredi 24 mars 2023

Accueil à 19 h 00 - Conférence à 19 h 30 précises

Salle de la cathédrale arménienne de Paris
15 rue Jean Goujon - Paris 8^e

Le nombre de places étant limité, merci de confirmer votre présence
à l'adresse suivante : arthur@tchobanian.org



Sous le haut-patronage
de Madame Valérie Boyer
Sénatrice des Bouches-du-Rhône

L'ONG NATION INITIATIVE/ՀԱՅՐԵՆԻՔ ՆԱԽԱԳԻԾ
LIBAN - ARMENIE

A le plaisir de vous convier a son dîner de soutien
aux enfants d'Arménie et de l'Artsakh
LE VENDREDI 31 MARS 2023

chez Françoise-Aérogare des Invalides -
75007 PARIS
a partir de 20h

Réponse avant le 25 mars
par chèque ou virement à l'ordre de Nation Initiative
TARIF 70 EUROS

mel: nationinitiative@gmail.com

N.Garabedian: 06 64 81 78 28
M.Tacvorian: 06 03 11 97 81



Ձեր ծանուցումները եւ գովազդները կրնաք ուղարկել
annonces@norharatch.com հասցեին:
Veuillez envoyer vos annonces à l'adresse ci-dessus








norharatch.com/boutique

NOR HARATCH

անցանց գրատուն – librairie en ligne



**DITES-MOI CE QUE VOUS LISEZ
ET JE VOUS DIRAI QUI VOUS ÊTES**



POUR PLUS D'INFORMATIONS, CONTACTER LA LIBRAIRIE DE NOR HARATCH

AU 06 81 66 57 84

OU ÉCRIRE À contact@norharatch.com

Առաքման ծախսերու խնայողութեան համար, կարելի է գիրքերը առնել ուղղակի «Նոր Յառաջ»-ի խմբագրատունէն: Քանի որ գիրք ապսպրելու պարագային՝ կապուիլ «Նոր Յառաջ»-ին, առաքումի գինը նշդելու համար:

«Nor Haratch»

83, rue d'Hauteville - 75010 Paris

Tél. 01 55 32 06 72

www.norharatch.com

